

Թեան թուղթը չէ բերուած, թոյլ չտրուեցաւ ունկնդրութեան, եւ թողմաս լսելով որ կաթողիկոսն արդէն վախճանած է (1714), մեկնած է Ամսդերտամ: Այս երկրորդ նամակը վատիկանի դիւանը մտած չըլլալուն ապացոյց է՝ որ միշտ 1709ի նամակը կը յիշատակուի:

Այժմ տանք Ս. Քահանայապետին գրած պատասխանին թարգմանութիւնը: Ասոր մէջ Ս. Քահանայապետն ամենայն աղնուութեամբ կը յորդորէ զկաթողիկոսն ի միութիւն հաւատոյ եւ կը զրկէ անոր Ուրբանոս Ը.ի վասն արեւելեայց դաւանութեան ձեւը, որ շատ անգամ հայերէն ալ տպագրուած է եւ ցայսօր թէ՛ արեւելեան եւ թէ՛ լատին Եպիսկոպոսներէն կը դաւանուի եւ կը ստորագրուի եպիսկոպոս ձեռնադրուելէն յառաջ: Ասոր մէջ կ'ապահովցընէ Ս. Քահանայապետը միսիոնարներուն առ կաթողիկոսն պարտական եղած յարգութիւնը՝ միութեան հետեւութեամբ:

«Սրեմարոյ Եղբորդ Աղեքսանդրի ամենայն Հայոց
Պատրիարքի

Կղեմէս Պապ ԺԱ.

Մեծարոյ Եղբորդ, ողջոյն եւն: Մեծաւ սիրով կարգացինք Եղբայրութեանդ նամակը, որուն մէջ քու առ Մեզ ունեցած բարեացակամութեան ակնյայտնի եւ բարեյօժար յայտարարութենէն զատ, Մեզ այնպէս երեւցաւ՝ թէ կը ցոլանայ Քրիստոնէական կրօնի քու անձնա-